



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

16.07.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ
Է. Չատինյանի (լիազորագիր, տրված՝ 15.06.2020թ.),

քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝
Պատվիրատու) կարիքների համար «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի
կարիքների համար՝ լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով
հայտարարված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի
(հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից
15.06.2020թ. ներկայացված (16.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝
ԳԲՔԱ-ՆԳ-2020/53 բողոք), պարզեցի հետևյալը.

**1. «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պա-
հանջը.**

«Արմա թրեյդ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 15.06.2020թ. Գնումների հետ
կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ լուսավորման

սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 գնանշման հարցման ընթացակարգ:

Նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել

ա) «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն

բ) «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն

գ) «ԱՐՄԱ Թրեյդ» ՍՊԸ-ն

դ) «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ն

2020թ. հունիսի 9-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 4.1 արձանագրությունը, որի 10-րդ կետով որոշել է 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ին, իսկ 2-րդ չափաբաժնով՝ «ԱՐՄԱ Թրեյդ» ՍՊԸ-ին:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

«Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ:

«Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ի կողմից չի լրացվել գնային առաջարկի ԱԱՀ-ի դաշտը, այլ կերպ ասած ԱԱՀ-ի դաշտում նշվել է 0:

Թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն, իսկ 2-րդ չափաբաժնով՝ «ԱՐՄԱ Թրեյդ» ՍՊԸ-ն:

Բողոքի իրավական հիմքերը.

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները ... որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Հիմք ընդունելով վերը նշված նորմերը, ներկայացնում եմ սույն բողոքը, քանի որ գտնում եմ Գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 9-ի անօրինական որոշմամբ ոտնահարվել է՝ «ԱՐՄԱ Թրեյդ» ՍՊԸ-ի իրավունքները:

Այսպես՝

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Օրենսգրքի կիրառության իմաստով՝ ֆիզիկական անձինք են համարվում նաև՝

1) անհատ ձեռնարկատերերը.

Տվյալ դեպքում թիվ 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված ֆիզիկական անձ «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, քանզի վերջինս որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված է ՌԴ-ում:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 58-րդ հոդվածի՝ ավելացված արժեքի հարկը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ գործարքներն ու գործառնությունները. ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ապրանքի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե ապրանքի մատակարարման պահին այն գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ եթե ապրանքն արտահանվում է Հայաստանի Հանրապետությունից:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝

որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները:

Սույն մասով սահմանված դեպքերում՝

2) ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքները համարվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացված, եթե ապրանքի մատակարարման վայրը Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, իսկ աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, Օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

Բացառապես նույն պարզաբանումն է ներկայացրել ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա.Մանուկյանը 05.06.2019թ. թիվ 03/3-326116-2019 գրությամբ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ.Բրուտյանը:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ քանի որ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ի կողմից իրականացվում է ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարք, ուստի վերջինս օրենքի տրամաբանությամբ և ուժով հանդիսանում է ԱԱՀ-ով վճարող:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ

մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ եթե ԱԱՀ վճարող համարվող սուբյեկտի կողմից չի լրացվել գնային առաջարկի ԱԱՀ-ի դաշտը, ապա անվերապահորեն վերջինիս ներկայացրած հայտը ենթակա է մերժման:

Նշված իրավական վերլուծության լույսի ներքո պարզ է դառնում, որ «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա էր մերժման, քանի որ վերջինս իր կողմից ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ի դաշտը չէր լրացրել: Այնինչ 2020թ. հունիսի 8-ին գնահատող հանձնաժողովը թիվ 4.1 արձանագրության 10-րդ կետով սահմանված որոշմամբ ոչ միայն չի մերժել «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ի հայտը, այլ նաև վերջինիս թիվ 1 չափաբաժնով ճանաչել է ընտրված մասնակից՝ թույլ տալով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի խախտում:

Ամփոփելով վերոգրյալը և հուսալով, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, ով շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից, ինչպես նաև ևս մեկ անգամ պնդելով բողոքում նշված իրավական և փաստական հիմնավորումները խնդրում եմ

1. դադարեցնել թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 9-ի թիվ 4.1 արձանագրության 10-րդ կետով կայացված որոշումը

2. պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում»:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ինչպես «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի անունից 15.06.2020թ. գրավոր կարգով ներկայացված բողոքով, այնպես էլ 19.06.2020թ. բողոքի քննության ընթացքում բանավոր կարգով հայտնել և հիմնավորել եմ, որ թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 9-ի թիվ 4.1 արձանագրության 10-րդ կետով կայացված որոշումն անօրինական է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն օրենքի ուժով հանդիսանալով ԱԱՀ-ով վճարող, պարտավոր էր լրացնել գնային առաջարկի ԱԱՀ-ի դաշտը, ինչը սակայն չի կատարել:

Այն, որ ոչ ռեզիդենտ «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն հանդիսանում է ԱԱՀ վճարող անվիճելի փաստ է, քանի որ այդ հանգամանքը հաստատվում է ոչ միայն բողոքում վկայակոչված իրավական նորմերով, այլ նաև բողոքին կից ներկայացված ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա.Մանուկյանի 05.06.2019թ. թիվ 03/3-326116-2019, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի Կ.Բրուտյանի գրություններով:

Այնուամենայնիվ ցանկանում եմ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել նաև հետևյալին՝

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի n 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 526-Ն որոշման 50-րդ կետի համաձայն՝ Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված

կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը:

Վերը նշված հոդվածների տառացի մեկնաբանությունից և համակարգային վերլուծությունից հետևում է, որ ընտրված մասնակիցը նախքան պայմանագրի կնքումը պարտավորվում է ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթղթերը:

Այստեղ պետք է նկատել, որ ռեզիդենտը պայմանագրի և որակավորման ապահովումը վճարում է հիմք ընդունելով պայմանագրի գինը, որի մեջ ներառված է նաև ԱԱՀ-ն, իսկ ոչ ռեզիդենտը՝ հիմք է ընդունում պայմանագրի գինը՝ առանց ԱԱՀ-ի:

Այնինչ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ստացվում է, որ սույն դեպքում խախտվում է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող սուբյեկտների հավասարության սկզբունքը, քանի որ ռեզիդենտ ֆիզիկական անձը նվազ նպաստավոր պայմաններում է հայտնվում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի նկատմամբ:

Վստահաբար պնդում եմ, որ եթե բողոքը մերժվի, այլ կերպ ասած, եթե այս անօրինակությանը վերջ չդրվի, ապա հետագայում երբ «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ն չկատարի իր կողմից կնքված պայմանագրի շրջանակում ստանձնած պարտավորությունները, ուղղակի կարող է դիմել դատարան և հիմնավորել, որ իր ներկայացրած հայտը դեռևս հայտերի գնահատման փուլում պետք է մերժվեր, այն պատճառաբանությամբ, որ ինքը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ, հանդիսացել է ԱԱՀ վճարող, սակայն չի լրացրել գնային առաջարկի ԱԱՀ-ի դաշտը:

Պետք է նկատել, որ դատական պրակտիկան զարգանում է հենց այդ ուղղությամբ: Ի հիմնավորումն վերը նշվածի սույն բողոքի լրացմանը կից ներկայացնում եմ թիվ ԵԴ/0686/02/18 քաղաքացիական գործով վճռի օրինակը, որտեղ Դատարանը՝ բավարարելով հայցը, հստակ նշել է՝ տվյալ դեպքում վերը նշված իրավական վերլուծության լույսի ներքո դիտարկելով «ԹԻ ԷՄ ԶԻ գրուպ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված գնային առաջարկը, հետևում է, որ այն ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, (4-րդ հավելվածի գնային առաջարկում չի լրացվել ԱԱՀ-ի դաշտը), որպեսզի հանգամանքն էլ հիմք էր, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտերի բացման ժամանակ մերժեց «ԹԻ ԷՄ ԶԻ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Մինչդեռ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.11.2017թ. թիվ 2 արձանագրությամբ ոչ միայն «ԹԻ ԷՄ ԶԻ գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պայմաններին համապատասխան, այլև նաև կայացրած որոշմամբ Ընկերությանը ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Այսպիսով, դատարանը արձանագրում է, որ Ընթացակարգը գնահատող հանձնաժողովը «ԹԻ ԷՄ ԶԻ գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատելով բավարար և վերջինիս ճանաչելով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Կարգի 43 կետի համաձայն հանձնաժողովը պետք է մերժի այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ այն ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան: Ելնելով վերոգրյալից դատարանը գտնում է, որ հիմնավոր է հայցվորի՝ ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի 06.02.2018թ-ի թիվ ԱՅ-ԱՄ-2017/79 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, պահանջը:

Այսինքն վերոգրյալից հետևում է, որ սույն գործով եթե չբավարարվի «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի անունից ներկայացված բողոքը, ապա միանշանակ ոչ միայն խախտվելու է ՀՀ հարկային օրենսգրքի, Գնումների մասին ՀՀ օրենքի ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման համապատասխան նորմերը /որոնք վկայակոչվել են բողոքում/, այլ նաև «պարարտ հող» է նախապատրաստվելու «Ավետիսյան Հայկ Վազիրի» ԱԶ-ի համար, որպեսզի վերջինս հետագայում պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում խուսափի պատասխանատվությունից, իսկ դրա արդյունքում տուժելու է նաև ՀԱԷԿ ՓԲԸ-ն և ՀՀ-ն:

Ելնելով վերոգրյալից՝ ևս մեկ անգամ պնդում եմ՝

1. դադարեցնել թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊԶԲ-41/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ. հունիսի 9-ի թիվ 4.1 արձանագրության 10-րդ կետով կայացված որոշումը,

2. պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.06.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ բողոքի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.06.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԲԱ-ՆԳ-2020/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԲԱ-ՆԳ-2020/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել նաև Ավետիսյան Հայկ Վազիրի Ա/Ձ-ն և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ն:

2. «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկում ԱԱՀ-ի դաշտը նշվել է 0:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. նիստի թիվ 4.1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է առաջարկել վերջինիս կնքել լուսավորման սարքերի և լամպերի մատակարարման պայմանագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի 15.06.2020թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, և 06.07.2020թ. բողոքի լրացումը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 03.07.2020թ. թիվ 03/3-1/42540-2020 և 13.07.2020թ. թիվ 03/3.1/44579-2020 գրությունները, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: **Հայտը ներառում է մասնակցի հաստատված գնային առաջարկը:**

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և

ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել նաև «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ն:

«Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկում ԱԱՀ-ի դաշտում նշվել է 0:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. նիստի թիվ 4.1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է առաջարկել վերջինիս կնքել լուսավորման սարքերի և լամպերի մատակարարման պայմանագիր:

Այսպիսով՝ արձանագրում են, որ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ն ԳԲԲԱ-ՆԳ-2020/53 բողոքով հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի կողմից իրականացվում է ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարք, ուստի վերջինս օրենքի տրամաբանությամբ և ուժով հանդիսանում է ԱԱՀ վճարող, մինչդեռ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի կողմից չի լրացվել գնային առաջարկի ԱԱՀ-ի դաշտը՝ նշվել է 0: Միաժամանակ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի խախտում, քանի որ 08.06.2020թ.-ին թիվ 4.1 արձանագրության 10-րդ կետով սահմանված որոշմամբ ոչ միայն չի մերժել «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի հայտը, այլ նաև վերջինիս թիվ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ճանաչել է ընտրված մասնակից:

Միաժամանակ արձանագրում են, որ բողոքաբերը բողոքի շրջանակներում ներկայացրել է ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանի 05.06.2019թ. թիվ 03/3-3/26116-2019, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի գրությունները:

Այսպես՝

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը 05.06.2019թ. թիվ 03/3-3/26116-2019 գրությամբ վկայակոչել է ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասը, 39-

րդ հոդվածը, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 70-րդ հոդվածի 2-րդ մասը, 75-րդ հոդվածի 3-րդ մասը և հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքները համարվում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ և ենթակա են ԱԱՀ-ով հարկման օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով: Ընդ որում, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը հանդիսանում է ԱԱՀ վճարող, ապա վերջինս ոչ ռեզիդենտ կազմակերպության փոխարեն՝ որպես հարկային գործակալ կրում է ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորություն: Իսկ երբ պայմանագրային հարաբերությունների կողմը համարվում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կամ շրջանառության հարկ վճարող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով, ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուսյանը փաստաբան տիկին Ռիմա Գնթունուն ուղղված գրությամբ վկայակոչել է ՀՀ հարկային օրենսգրքի 31-րդ հոդվածը, 32-րդ հոդվածի 1-ին մասը, 70-րդ հոդվածի 2-րդ մասը, նույն մասի 2-րդ պարբերության 5-րդ կետը, 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը, միաժամանակ հայտնել է, որ՝

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ գլխով սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերեր) տվյալ հարկային տարում չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող և համարվում են ԱԱՀ վճարող,

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) կողմից՝

ա. համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներից դուրս հարկման ենթակա գործարքներ իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է տվյալ գործարքի կողմ հանդիսացող համատեղ գործունեության պայմանագրի մասնակից հանդիսացող կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը),

բ. համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում իրականացվող գործունեության մասով ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքներ իրականացնելու դեպքում ԱԱՀ հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը,

ՀՀ-ում ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքներ իրականացնելու դեպքում ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորություն կրում է, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը համարվում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կամ շրջանառության հարկ վճարող կամ արտոնագրային հարկ վճարող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով, իսկ պայմանագրային հարաբերությունների կողմը ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ԱԱՀ վճարողը: Ամփոփելով հայտնել է, որ եթե կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ վճարող, ուստի հայտ ներկայացնելիս գնային առաջարկը պետք է ներկայացնել հաշվի առնելով ԱԱՀ-ի գումարը:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերը նշված փաստերը, ինչպես նաև բողոքի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 24.06.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/9458-2020 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվում է ԳԲՔԱ-ՆԳ-2020/53 ծածկագրով բողոքը, որի շրջանակներում վիճարկվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին ИП Аветисян Айк Вазирович-ի (ՀՎՀՀ՝ 713500973168) ներկայացրած հայտը, մասնավորապես՝ հայտում ներառված գնային առաջարկը, որում մրցույթի մասնակիցը ավելացված արժեքի հարկի բաղադրիչ չի ներառել (կցվում է):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող

շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Այսպիսով՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/53 ծածկագրով բողոքի հիմքերի ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում հայտնել՝ ИП Аветисян Айк Вазирович-ը, չհանդիսանալով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, իր կողմից ներկայացված գնային առաջարկը պետք է ներկայացնի ԱԱՀ-ով, թե ոչ»:

Ի պատասխան վերը նշված հարցման՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 03.07.2020թ. թիվ 03/3-1/42540-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 72-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ապրանքների փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է նշանակման երկրի սկզբունքով, որով նախատեսվում է ապրանքների արտահանման ժամանակ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառում, ինչպես նաև ներմուծման ժամանակ դրանց հարկումն անուղղակի հարկերով: Նույն պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» N18 հավելվածով սահմանված արձանագրության՝

- 3-րդ կետի համաձայն՝ մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքներ արտահանելու դեպքում այն անդամ պետության հարկատուի կողմից, որի տարածքից դուրս են բերվել ապրանքները, կիրառվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ՝ նույն Արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հարկային մարմին ներկայացնելու դեպքում,

- 13-րդ կետի համաձայն՝ որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների առումով անուղղակի հարկերի գանձումը, իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները՝ ըստ ապրանքների սեփականատեր հանդիսացող հարկ վճարողի հաշվառման վայրի: Ընդ որում՝ ապրանքների սեփականատեր է ճանաչվում այն անձը, որն օժտված է ապրանքների նկատմամբ իրավունքով, կամ որին

ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը նախատեսվում է պայմանագրով:

- 13.4-րդ կետի համաձայն՝ եթե մի անդամ պետության հարկ վճարողը ձեռք է բերում նախկինում այդ անդամ պետության տարածք մյուս անդամ պետության հարկ վճարողի կողմից ներմուծված ապրանքներ, որոնց նկատմամբ անուղղակի հարկերը չեն վճարվել, ապա անուղղակի հարկերի վճարումն իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այսինքն՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում, մասնավորապես՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը,

- 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում, եթե օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը,

- 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել՝ ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը և ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը,

- 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ գնորդի կողմից ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդին է անցնում Հայաստանի Հանրապետության տարածքում, նույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը գնորդը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը իրեն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ,

- 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ,

- 78-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գնորդի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը իրեն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ.

1) ԵՏՄ անդամ պետություններից փոխադարձ առևտրի շրջանակներում ՀՀ տարածք կատարված ներմուծումների մասով անուղղակի հարկերի գանձումը իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները՝ ըստ ապրանքների սեփականատեր հանդիսացող հարկ վճարողի հաշվառման վայրի,

2) գրությամբ ներկայացված դեպքում, եթե ԵՏՄ անդամ պետություններից՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտի կողմից, ապա այդ ապրանքների ներմուծման մասով ոչ ռեզիդենտի մոտ ՀՀ-ում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չի առաջանում: Միաժամանակ, հայտնում ենք, որ այդ ներմուծման գործարքի մասով ՀՀ-ում գրանցված գնորդ կազմակերպության մոտ առաջանում է ԱԱՀ հաշվարկելու և վճարելու, ինչպես նաև հարկային մարմին ներմուծման հարկային հայտարարագիր, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման մասին հայտարարություն ներկայացնելու պարտավորություն՝ մինչև այդ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդ կազմակերպությանն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ»:

Այնուհետև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վերը նշված գրությունը, 09.07.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/10282-2020 գրությամբ կրկին դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին և խնդրել է պարզաբանել հետևյալը.

«ИП Аветисян Айк Вазирович-ը (ոչ ռեզիդենտ) (ՀՎՀՀ՝ 713500973168) մասնակցել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «Լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված» «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ներկայացրել գնային առաջարկ՝ ԱԱՀ-ի համապատասխան դաշտը չի լրացրել (գրո) (Հավելված 2-ը կցվում է):

Ի վերջո տվյալ դեպքում վերջինս գնման ընթացակարգին ներկայացվող գնային առաջարկում ԱԱՀ դաշտը պարտավոր էր լրացնել (հանդիսանում է ԱԱՀ վճարող), թե ոչ:

Հաշվի առնելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ որոշում կայացնելու համար նախատեսված ժամկետները՝ խնդրում եմ պատասխանը ներկայացնել հնարավորինս սեղմ ժամկետում»:

Ի պատասխան վերը նշված հարցման՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 13.07.2020թ. թիվ 03/3.1/44579-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման մասով ԱԱՀ-ի հաշվարկման ու վճարման, հարկային մարմին համապատասխան փաստաթղթերի ներկայացման կարգի ու ժամկետների մասին հայտնել ենք 03.07.2020թ. N03/3-1/42540-2020 գրությամբ՝ ի պատասխան Ձեր 24.06.2020թ. N/ԲՔԱ-ԳՆ/1/9458-2020 գրության: Մասնավորապես, հայտնել ենք, որ եթե ԵՏՄ անդամ պետությունից ապրանքները ներմուծվում են ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտի կողմից, ապա այդ ապրանքների ներմուծման մասով ոչ ռեզիդենտի մոտ ՀՀ-ում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չի առաջանում: Միաժամանակ հայտնել ենք, որ այդ ներմուծման գործարքի մասով սահմանված կարգով ու ժամկետներում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու, ինչպես նաև հարկային մարմին ներմուծման հարկային հայտարարագիր, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման մասին հայտարարություն ներկայացնելու պարտավորություն կրում է ՀՀ-ում գրանցված գնորդ կազմակերպությունը: ՀՀ-ում գրանցված գնորդ կազմակերպությունը այդ ներմուծման գործարքի մասով ԱԱՀ-ի հաշվարկում և վճարում, համապատասխան փաստաթղթերը հարկային մարմին

ներկայացնում է մինչև ներմուծված ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդ կազմակերպությանն անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Հաշվի առնելով, որ ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը ԵՏՄ անդամ պետությունից ապրանքների ներմուծման մասով ՀՀ-ում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չի կրում, ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին համապատասխան ԱԱՀ վճարող չի համարվում, ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գնային առաջարկ ներկայացնելու դեպքում ԱԱՀ-ի համապատասխան դաշտում ԱԱՀ-ի գումարի վերաբերյալ նշում չի կատարում»:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշված փաստերը և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ հարկային ոլորտի լիազոր մարմնի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սույն գործի շրջանակներում վերը նշված գրություններով ներկայացված դիրքորոշումը՝ մասնավորապես՝ ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը ԵՏՄ անդամ պետությունից ապրանքների ներմուծման մասով ՀՀ-ում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չի կրում, ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին համապատասխան ԱԱՀ վճարող չի համարվում, ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գնային առաջարկ ներկայացնելու դեպքում ԱԱՀ-ի համապատասխան դաշտում ԱԱՀ-ի գումարի վերաբերյալ նշում չի կատարում, միաժամանակ Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը, որով սահմանվում է, որ ***եթե մասնակիցը փվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկարեսակի գծով վճարվելիք գումարի չափը***, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում ИП Аветисян Айк Вазирович-ը, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսանալու և ՀՀ-ում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չկրելու պայմաններում, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով իր կողմից ներկայացված գնային առաջարկում չնախատեսելով ԱԱՀ, գործել է իրավաչափ, հետևաբար գտնում եմ, որ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ վերջինիս հայտը բավարար գնահատելու մասով, իրավաչափ են:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում են, որ Ընկերության բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 15.06.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ